



ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ · — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ · — ՊԱՏՄԱՆԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ՆԵ ՓԵԲՐՈՒԱՐ

ԼԵԶՈՒԱՐԱՆԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆ “ԳԻՒԻ”

ԵԿ

ԲԱԲԵԼԱՍՏԱՆԻ ՆՈՒԻՐԱԿԱՆ ԽԱՌԸ

Անդես ԱՄՍՈՐԵԱՑի հոկտեմբերի թուղյն մէջ (1896) քննուրիան մը կարդացինք,
Հ. Գ. Մեն. առողազրութեամբ «Հայերեն դիճի» և այն, վերնազրով՝ Հանդիխին նախորդ թուղյն մէջ հրատարակուած մեր յօդուածին։
Չուզեցինք այս քննութիւնս տուանց պատասխանի թողով, գոնէ մեր ըսաններուն տրուած սիալ մեկնութիւններն ուզգելու համար։

Հեղինակը՝ անակնկալ յարձակմամբ մը

մսելով քննուրիւնը, նախ կը մեղազրէ զմեզ,
իբր թէ էնչ բառին արմատ զրած ենց չէ
և ոյ էնչ, « խնդիրն է, կ'ըսէ, սեմական
և հնդեւրոպական նոյն բառին (?) ազգակցու-
թիւնը ցոցնել », և մեր՝ աքքաղերէնի և
հայերէնի վրայ յայտնած աենութեան ակն-
արկելով, կը յաելու ընտիր զուարճարա-
նութեամբ, « յօդածագիրը վարազզատեան
անյաջող ցամբած մը կ'ընէ գէպ ի Բաբե-
լոն, Ասորեստան, և ակլազերէն մը բանած
ի հրապարակ կը ձգձգէ, զոր անշուշո պիսի
չ'ընէր, եթէ նկատողութեան առնուր Հօ-
մելի ըսածը, թէ « Միջագիտի սումերեան
—ակլազեան նախաբնակիշներու անձանօթ էր
ո՞ն ո էնչն »։

Մեր նպատակն և խնդիրն իսկ էր մէկ
կոզմէ էնչ բառին ազգակցութիւնը ցոցնել՝
ոչ միայն հնդեւրոպական և սեմական, այլ

և որիշ լեզուաց հոմանիշ բառերուն հետ, և միս կողմէ աքքաղեանց ՀԻ կամ ՀԻՆ (և կամ ԳԻ, ԳԻՆ)¹ կողուած նորիքական ծառուն անուան հետ՝ նախնական նայնութեանը վրայ մեր տեսութիւնը յայտնաբանել: Այս՝ թողլով առ այժմ այս վերջին կէտը, որուն վրայ երգիծաբանելով կը գոհանայ մեր քննադասը, եթէ Քինի և սեմական և արիշ լեզուաց մէջ՝ անոր համապատասխանող բառերու մասին՝ մեր ըրած զիտողութիւնքն անտեղի կամ անրաւական էին, պէտք էր ապացուցանել զայն, մինչդեռ զանոնք հազիւ կը փորձէ քննել. այլ այն զրութեան վրայ յենկով՝ թէ Քին բառը բնիկ հնդեւրոպական բառ է, կը վերազրդ զայն ենթազրեալ հնդեւրոպական նախակերպութիւն, (որ իւր վարկը շատ կորուսած է արգէն) * ուժո՞ն կամ * սօնո՞ն ձեւին, որ « նախ կը նշանակէր, կ'ըսէ, որբատուն և յետոյ այս որթատոնկէն յառաջ եկած ըմպելին », (հաստատելով այսպէս մեր կարեսոր մէկ ենթազրութիւնը), և կը պնդէ՝ իւր եղբակացութեան մէջ՝ թէ Քին նախնական շի կրնար ըլլալ, վասն զի վերջին է զիրը պէտք էր իյնալ, լեզուաբանական օրինոք: Բայց Բ'նշպէս մենինելու է այդ զրութեամբ, այնքան զանազան լեզուաց մէջ զինոյ անուններուն յայսին նմանողութիւնը: Դժբախասարար իւր ի վկայութիւն կոշած վախնականները՝ այս հիմնական խնդրոյն վրայ, և նոյն իսկ Քինի հնդեւրոպական ծագման մասին, բնաւ համախուն չեն երիկը, և մեր նոր բան մը չեն սորվեցներ. կը հաստատեն որ « Եւրոպա ալիքած ձնը կը տիրէ նաև սեմական լեզուաց մեծագոյն մասին վրայ ». յօնարէն բառին երգամեցերէնէ առնուած ըլլալուն նկատմամբ հակառակ կարծիք կը յայտնեն. իրանողերէնի, նաև գոթացի և պաւ ձեւերուն « ուղղակի կերպով լատիններնէ փոխառեալ ըլլալ չեն ընդունիր, և կ'ըսեն թէ սեմական իրենց առանմեան Փոքր Ասիոյ հնդեւրոպական մէկ լեզուէն (ո՞ր լեզուէ) առած են »:

Նմանապէս, երբ Հübschmann գինի բառով լատիններնէն և յունարենէն շի բաժներ, Տե Lagardeի կարծեաց հակառակ, Եսցը կակասեան լիգուէ մը փոխառեալ կը համարի զայն, և այլն: — Խակ Jenseitը՝ որ կակասեան լեզուաց զինոյ անունը հնդեւրոպական բառին բառին հետ յայտնապէս ազգակից կը սեպէ, կ'ըսէ թէ՝ ոչ թէ համբը կակասեան ծովովրազներէն, այլ ասոնք հայոցմէ առած են նոյն բառը. և ասոր. յուին նախնի սեմական բառ ըլլալը կը պաշտպանէ: Հօտելի գէմ, որեմն և զինոյն նախնի սեմականաց ծանօթ ըլլալը¹: Այսպան հակասութեանց մէկ եթէ ստուգելի բան մը կայ, այն է՝ թէ Քինի և անոր նմանող բառեր՝ հնդեւրոպական արմատէ մը սերել տալու փորձերը անլուածաննելի առեղջուածի մը վերածած են խնդիրը, և թէ այս խնդրոյս լուծումի ուրիշ ուղղութեան մէջ պէտք է խուզել: Արդէն զինոյն անուան սահմակիսի և իրանեան լեզուաց մէջ բոլորովին տարբերիլլը՝ անոր հնդեւրոպական ծագումը ծանր կասկածի ասկ կը ձգէ. մինչդեռ հայերէն խորոշի և զփոխ հնդէին մջի աղերսը, որ ըսել կու տայ De Lagardeի՝ թէ ասոնք մին միսին բնիկ ձեւը պէտք է ըլլայ, և միանգամայն երկուքին ևս սանի. ԾՈՒՅ (հձլա), « զինի,, բառին բացերև նմանութիւնը թերեւս բաւական կը յայտնեն այդ ուղղութիւնը և կը նպաստեն մեր յառաջարկութեան»:

Հայ. Քինի արմատին համար արգէն ըստ էինք՝ թէ այս արմատը կը թուի ըլլալ Քի կամ Քին. թէ ասոնք առաջինը՝ զոր իրը հնագոյն նկատեր էինք, Քին ձեւը կրնար առնուլ Քին բառին մէջ, յայտնապէս կը հետակի բառ մեր տեսութեան՝ աքքաղերէնի կրկին ձեւնէն². և որովհետեւ նէ և մաս-

1. Zeitschr. d. Deutschen Morgeng. Հատ. 48, էջ 464-5:

2. Հմատ. այս վաղեմի ձայնաբանական երկույին նկատմամբ, ուսւէաբէն ֆի, « Քինի,, որ կը լուսաց ֆիմ հույվանց և բարուսթեանց մէջ՝ նոյն երեսիլ կը նշանակի հայերէնի և այլ լեզուաց մէջ. մի (արմատ) եւ մեն, մեն. դեռ-եւ, արմատ դի. լե-սուլ, արմատ լի (հմատ. Հին եր. Ալ, և այլն. տես Հübschmann, Arm. Stud., էջ 32). գ-ալ և զի-ալ, արմատ զա.

1. Լաւագոյն համարեցանք աքքաղերէն բառերը լատին տառերով նշանագել, եւրոպացի մանագիտաց ընթեցմաւնքը ճշգիւ ներկայացնելու համար:

Նիկները հաւասարապէս ծառի անուններ կը կազմէն, եթէ էնէ ինչպէս ըսած էինք, թէ ծառը նշանակած է երթեմն, վերջին է դիրը ինչնիրեն կ'արգարանայ : Նոյն և տարրին յաւելման որիշ նշանաւոր օրինակ մը արքադ. GUSKI կամ GUSKIN բաւն է՝ որ հնմամբ և նշանակութեամբ կը պատափանէ ոչ բառին¹, որուն համար Հիւնչմառու կ'ըսէ թէ « ծագումը անյայ է » :

Իսկ քննադասախն Homelei վկայութեան դիմել՝ ըստ որուն որին և էնին անձանոթ էին արքային ժողովրդեան, կը ցուցընէ միայն թէ մեր զորութիւնը հազի կարգացած է և կամ անոր էական իմաստը չէ ըմբռունած : Մ'եր յայտնած կարծիքն էր թէ այդ ժողովրդը՝ որուն բնապատճն էր Ալարատեան երկիրը, նախ եռն ճանչացած էր ին ժառը և անոր ըմբէին՝ որուն անունը տրուեցաւ յետոյ գինույն . և երբ նոյն ժողովրդը գաղթեց ի Մ'իշապետք, նոյն էից անունը առուա այն ծատին (արմաւենույն) որ Բարեւշաստանի մէջ արժանապէս կրնառ ներկայացընել որթը : Այդ էր մեր ըսածը, մեր հիմնական ենթապրութիւնը . ուստի Homelei վկայութեամբը՝ մեր քննադասը ոչ թէ կը հերքէ, այլ անփառաբար կը հաւաստէ այդ ենթապրութիւնը :

Եետոյ քննադաս հեղինակը վճռաբար կը

Հմմտ . լատ. ven-io (De Lagarde այս արմատէն կը հանէ լու-քայ կրկնական ձեւ . իսկ գ' է և է ի փոփոխման համար, հմմտ . հագ-պ' և հալ-ել, զանգ-իւն և գանձ-ել, ագ-ի և պոչ, պագ-անել և ռամէ . պալ-իկ, թէրեւս աց-աղող-ի և կաս-աղալ, այլն . տես Արմ. Stud. 438 և 500), բան, արմատ բա (քաս-, քա-ս, քա-յ), հմմտ . գոնի . կես-լ և կես-ք կեն- . բան-ալ, արմատ բա . հմմտ . գանցւ-նոյնպէս և մասնիկներու մէջ . յետի և յետին, նախկին և անախկին . այլ :

1. Արքադ. բառն օսյա արմատը « փայլելու » իմաստն ունի. բնչպէս շատ մը ոսկւոյ, արծաթի և ուրիշ մետաղներու անունները, այլ եայլ լեռուաց մէջ . որով կը մեկնակառ ոսկի բուն նշանակութիւնը : Ուշչպրութեան արժանի է որ միայն հայրենին և աքքարենին մէջ ոսկի նշանակութար բառը՝ կը դանենք Քիններներ, այսինքն առանձնանեն լեզուի մը մէջ waski ձեռով և պղինձով նշանակութեամբ : (Տես De Lagarde, Արմ. Stud. 1758):

յայտարարք թէ էնէ և էնէ բառերուն « անհնարին է հասարակաց արմատ մը տալ », և « հարկ էր, կըսէ, էնէ բառին ստուգել էնէն յառաջ գալուն կորելիսութիւնը », մինչեւ մենք այս բառերուս առընչութեան վրայ բաւական երկար զատկ էինք. բայց մեր ցըցուցած պատճառները չի յիշեր անցամ: Իսկ էնի և էնէն նախնական հայերէն բառերը ըլլան արդէն այնու իսկ կրնայ բաւական ստոյդ համարուիլ, որ ո՛չ մէկ հայապէտ մը՝ կարծենց՝ այս բառ-աբրուս ուրիշ լեզուի մը հետո կապակցութիւն ունենալը լեզու չէ ձեռնարկած ցուցընելու . ուստի և կը մնան հայերէնի՝ արդի զորութեամբ անմեննելի տարրերուն կարգը: Վերջապէտ, հեղինակը շի կրնայ մեր եղանակացութեամբ լուծուած համարիլ ինչնիր մը, որ « նոյն իսկ նմառ լեռուացիւաց առիթ կու այս ենթացաւթեանց վիմելու, և զեռ իրը անսատոց իրութիւն՝ նորանոր քննութեանց բալին անցնելու » : Ուրեմն իսկն իսկ կը խստապահի բերած վկայութեանցը մեզի գէմ անարդիւն մնալը: Բայց մենք շանինք երբէց որ այս ծանր ինդիրը լուծած ենք . մենք միայն մեր կարծիքը, նոր ենթագրութիւն (hypothèse) մը մէշտեղ զրինք, ինչպէս կը վկայէ արողը մեր նախկին զորութիւնը : Եթէ շի կրցանք հաստատել անոր հաւասարանութիւնը, քննադասին պարտցն էր, բռնազմօսած կամ հեգնական ակնարկութեանց աեղ, գոնէ մեր ըսածները՝ հասկնալու չափ ուշացութեամբ կարողալ և հերքելու համար նկատողութեան առնուլ: Հազիւ թէ մեր ըրած բաղաստութեանց փոքրիկ և երկրորդական մէկ մասը քննութեան կ'ենթարկէ, մեր « լեզուացիւացիւեան նոյն իսկ տարրական օրինաց գէմ մեզանչելը » ցուցընելու նպատակաւ, այլ տեսնենք թէ ի՞նչ աստիճան յաջողութեամբ :

Գլուր բառը՝ զոր կը բաժնէ ի էն-ու, անպատճութիւն կը համարի բաղդատել լատ. vol-ստի հետ, և մանաւանդ տանի լատ. vesicar հետ համեմատումը կը պայթակեցընէ զինքը. վասն զի նյ. + ի լատ. ոի փոխուիլը նորանեար եերադրութիւն մըն է՝ կ'ըսէ . և հետեւաբար յաղթական ոմալ կը յարէ թէ « այս անպատճութեանց առջև այլ

և աեղի չի մար կասկածելու թէ հիմնարք չեն և մեր քննաթիւնները : — Առզարկ կը հաճի հաւասառել, թէ սի և էի փոփօխութիւնը հասաւառուն կանոն է. միայն՝ երբ ինպիրը հայերենի և լատիներենի վրայ է, երեց օրինակ կը բերէ (Պոլո, Գեր, Էլուել), որոնց ոչ մէկին լատիներենի մէջ համապատասխանող բառ չի կայ. այլ թողունք և այս փոքրիկ մասայածութիւնը : Գոյք բարին առարկելուն պատճառը պիտի ըլլայ՝ թէ հնդեւրոպական լեզուազիտութեան կանոններով, հայ. Էն հնդեւրոպական օր չի կրնար պատասխանել : Խոկ մենք՝ որ այդ կանոններուն (որչափ որ հայերենի կը վերաբերին) անսխալութեանը վրայ կասկած ունինք, չենք կարծեր որ առանց բացառութեան ըլլան : Սակայն հոս կը բաւէ անշուշտ յիշեցնել մեր քննադատին՝ թէ նոյն խոկ Hüb schmann «սիրո», բառը կը համեմատէ լատ. corfin, և «մէտ», բառը՝ լատ. modusի հետ¹. զիսելի է նաև «քիրտն», բառը լատ. su dorum և էլլը յն. Ծոնչէ հետ (իրաւամբ՝ կարծենք) համեմատելը : Քարձեալ De Lagarde գլ - ել բառին արմատ կը գնէ ով ձեր և կը բաղպատէ յն. Ելնենքի և լատ. volvenerի հետ : Կրնանք յաւելով որ՝ թէ և էլլը, էլլէ բառերուն անմիջական արմատն է էլլ, սակայն իսկապէս էլլ արմատէ մը կը մագին՝ զոր կը զանենք մեր էլլ - որ ձերին մէջ : Այս էլլ, էլլ արմատը, ոչ թէ զոր հնդեւրոպական արմատ է էլլ, սակայն կարգես էլլ արմատէ մը կը մագին՝ զոր կարգէն կը թուի ըլլալ՝ որ հաւասարագութիւն առաջ կը պատճանին հնդեւրոպական և սեմական լեզուներուն . և այս մասին շատ յանդոգն շերելելու համար, կրնանք յիշել ուրիշ անսանի լեզուազէտ մը որ հնդեւրոպական գոլ, ցալ արմատը՝ որ “զլոր ըլլալ”, կը նշանակէ, կը բաղդատէ սեմական գոլ արմատին՝ որ նոյն նշանակութիւնն ունի, և կը յարէ թէ Rau mer երբ. ցծ, ցն՝ “զջան առնով, բառը կը համեմատէ յն. առնձնանք, և երբ. ցալ էլլ, “զըմանակ”, և gal ձեւը յն. առնձնակը “կոր”, լատ. collisır հետ².

(հման. հայերենի ուոր, բուռոր, հոլոով և իր ձեռքը) : — Գալով տանի բարին, զարծեալ կը մոռնայ մեր քննիչը որ Հիւբ-
շլուման՝ +ի հնգերպասկան նի փոխուիլը հիմնապէս կ'ընդունի, և հայ. տանը կը հա-
մեմատէ (թէ և վերապահմամբ) լատ. ո-
ցունիք¹, և վստահութեամբ կը պնդէ թէ
+ունի բառը սեմական ծագում ունի, և ա-
ռանց մեզ լուսաւորելու ՎԵՏԻԿԻ ծագման
վրայ, իւր համար ի վկայութիւն կը կոչէ
մեզի գէմ վերոյիշեալ երկու մեծանուն հա-
յագետները : Հիւբշլուման իր յետին և
մանրամասն երկասիրութեան մէջ՝ հայերենի
սեմական փոխառեալ բառերուն վրայ, +ուն-
բառը այդ բառերուն կարգէն դուրս բռղած
է : իսկ De Lagarde, նոյն իսկ հեղինակին
յշխած գրութեանը մէջ (թիւ 2387) շի կրնար
մենինել ո՛չ մասնիկը՝ հանգէպ սեմական
բառերուն, և ո՛չ պարակ. *Kisahին* իյն իյնալը,
և կը հաստատէ թէ այս բառիս նկատմամբ
սեմականներն են փոխառութերը . . . : Ար-
դարեւ աններելի մեզանչանց քննաբանի մը
համար՝ որ համեստութիւնը աւելցող առաջի-
նութիւն մը կը սեպէ : իսկ էւրու բառը՝ զոր
մերձեցցիր էինք յն. ձքրքաջանի, որի և էի
փոփոխման իրը օրինակ բերուած կարծե-
լով, չենք հասկնար՝ կրսէ : Հոյ իրը հայ.
բառին աղբիր ցուցուած պարակ. և ասնակը.
բառերուն քով, ներուի մեզ յատաջ բերել
նաև արքակ. GARRA “præstatio”, “զր-
ռաւ”, և եր. ԵՐ, և լատ. arrha և arrhabo,
“զրաւի զնել”, բառերը, որով աւելի զր-
ռուարին կ'ըլլայ լուծել նոյն բառերուն ա-
ծանդութեան նինիոր :

Բայց՝ ըստ քննադատին՝ մեր «լեզուաբանական ամենամեծ լիբավիկներէն մէկը» մեր և տառին Յ փոխազրուելուն առարկեցն է. «պատճառ կը բերէ, կ'ըսէ, և» (*iēs*) բառը, որ Վանայ արձանագրութեանց մէջ գտեր է. և այսպէս խարիսուզ և զաղփաղփուն օրինակով մը տապալել կը ջնայ ուղիհանուր կանոնը». և նոյն արձանագրութեանց հետ զբաղող ուրիշ գիտնականի մը կաթիրը ի մէջ

4. Arm. Stud. 59 43 L 49:

2. Fr. Delitsch, Stud. über indogerm. — semit. wurzelverwantschaft. 49 107.

4. Arm. Stud., էջ 55 և 65: — Թերես ըի
լատ. սի փոփոխման կարենան զկայել նաև
ող և լատ. velo:

կը բերէ՝ որ իւր մէկ նամակին մէջ ըստած է, թէ ինչն ալ մեզի պէս կը պնդէր առաջ թէ եր և պէտք է հնչուի, սակայն հիմայ համոզուած է թէ մեր եր, ինչպէս հայերենի, նոյնպէս և յունարենի հինգերորդ տառին (ε) կը համապատասխանէ. ուստի պէտք է զայն հնչել ։ յիրաւի հոս խնդիրը կը ծանրանայ, վասն զի մեր զէմ կ'ելնեն հայկական լեզուարանութեան մէջ արժանապէս համբաւ և պատի ստացած գիտնականք :

Բայց նախ՝ վանայ արձանագրութեանց իւր բառը իրը պատճառ յառաջ շենք բերած, ցուցնելու համոր թէ և տարը և պէտք է հնչուի, ինչպէս կ'ըսէ հեղինակը, միշտ մեր բասծը չի հասկնալոլ, կամ թիւրելով : Այս օրինակը բերինց միայն եի՝ սիսամամբ ո փոխադրուելուն կարեռութիւնը ցուցընելու համար, համեմատական լեզուագիտութեան տեսակետով : Եթեոյ՝ մենք շենք որ վանայ արձանագրութեանց մէջ և բառը և անոր նշանակութիւնը գտած ենք. այս նշանակութիւնը ճշգիտ պատիւն ունեցած է St. Guyard, և այսօր ամէն մասնագէտը վանական շըքին եւ գերանուան նշանակութիւնը միահաւան կ'ընկունին: Բայց թողով այս երկրորդական կէտը, կրնանք հարցընել թէ բնչպէս հայոց և զիրը՝ որ այժմ իսկ և կը հնչուի ժողովրդեան բերանը՝ ո կարելի է կարդալ, այն պատճառաւ որ այս զիրս յունարենի հինգերորդ տառին և կամ եւ զերանունը յն. էցա, լաս. ego, զոթ. նէ, և այլն գերանուններուն կը պատասխանէ : Եթէ եի՝ ժամանակաւ օֆ վերածուիլլ կրնայ ենթադրուիլ, ինչպէս իրօք պատահած է քանի մը գաւառարարքանութրու մէջ, արգեօք ո՞ր ընդհանուրը կանոնով, ո՞ր ձայնաբանական օրինօց կրնայ վճռուիլ որ պարզ ո հնչումը նէի փոխուած է : Դարձեալ ի՞նչ զարմանք եթէ հայոց այրուենի յօրինողները յունական այրուենի շարքին հետեւելով, յունարէն և տառին զիմաց հայերենի ամենէն աւելի անոր մօտեցող ձայնը զրած են : Հեղինակին եւ զերանունն միւս լեզուաց նոյն անձի զերանուանց հետ սովորական բաղդաստութիւնը յառաջ բերելը, որով իրաւունց ստացած կը կարծէ մեզի զէմ բսելու՝ թէ « այսպիսի կարծիք զիտնական :

արժէք չի կրնար ունենալ »¹, բոլորովին ինդրէն զուրս է և միայն իրեն հմտութեան աւելորդ մէկ ցոյց մը : Ստուգիւ կ'երինչինք որ հայոց յայտնապէս և արասանած տառը ո եւն օք կարդալու յամառիլլ՝ միայն հայերենի ի թեկ և խւասակն հնդիւրուպական լեզու մը ըլլալուն կանխակալ կարծիք կրնայ մեկնուիլ : Ուսարի և շենք յուսահատիք որ մեր քննազամին թղթակիցը օր մը իւր առջի համոզման վերապանայ : — իսկ մեր զիտողութիւնը՝ Եի հետ միասեղ, * տառին նոյնակս սիսամամբ օ փոխազրուելուն վրայ, որ նոյնչափ կարենորութիւն ունի հայերենի ձայնաբանութեան նկատմամբ, հեղինակը բոլորովին լուսթեամբ կ'անցնի :

Վերջապէս, որթին Արարատայ և մերձակայ երկիրներուն մէջ բնիկ ըլլալու խնդիրը, Schraderի երկրաբանական զիտներու վրայ հիմնեալ վկայութիւններով չի լուծուիր . ասոնք կը հաստատեն միայն թէ « ԷՇՆ-Ջ մշակուրքելեն ատաշ որթատունիլը հարաւային և միջին Եւրոպայի մէկ մասին մէջ տարածուած էր », առանց հաւաստելու թէ Արևելք դեկ ի Արևմուտք եկած չէ որթատունիլը : Իսկ De Candolleի ըստծը թէ « . . . ի Հայո (և նոյն կողմերը) որթատունիլը վայրարոյս պատաղիձի երևոյշը ունի, բարձր ծառերու վրայ կը պատահի կ'ելլէ, և առանց յատելու և մշակելու առաս պտուղ կու տայ » , մանաւանդ թէ կը զօրացնէ մեր ենթադրութեան հաւանականութիւնը :

Միավ բանիւ, զինայ և ոդից ծագման ինդրոյն նկատմամբ, մեր յառաջադրութիւնը ամբողջ և անվիճար կը մնայ : Արզարի մեր քննազատը կը զինսուրի մեզի զէմ՝ էնիի հնդիւրուպական ծագման արդէն սասանեալ զրութիւնը պաշտպանելու համար, այլ տեսանց թէ ի՞նչ աւաղելի միջոցներով . և կը յուսանց որ կը ներէ մեզ՝ եթէ իւր հեղինակութեան կ'երիքայինք անձնատուր ըլլալու :

Բայց այս վիճիս մէջ բան կնճիրը, զոր մեր զիւրագրին քննազատը լոկ հեգութեամբ կ'ուղէ լուծել, հայերենի և արցակե-

1. Տես Hüb schmannի զիտութիւնը այս բառին վրայ, Actm. Stud., էջ 29:

բենի ազգակցութեան խնդիրն է : Գիտենք որ այսպիսի գաղափար մը՝ հայերենի ծագման վրայ ընդունաւած զրոյթեան հիմովին հաշառակ է : — Ըստ մեզ՝ աքրածերելն, ուստի և հայերեն՝ սկզբնարար, կը պատկանի տուրանեան անուանեալ լեզուաց դասուն՝ որ անտարակոյ լեզուարանովթեան ամենէն հին խաւերը կը կազմէն, և որուն հետ արդէն նշամբուած նախնական կապակցութիւն մը ունին նաև հնդեւոսպական և սեմական բարբառները : Այս տեսութիւնը արգարե լեզուաց ծագման միութեան խնդիրն ևս կը յարուցանեն, որ ոչ ուուազ հաշառակ է լեզուագիտաց մէջ ամրող սկզբանց, թէպէտ և մեր քննադատը միտունմ ունենալ կ'երի այս միութեան գաղափարին . շենք գիտես սակայն թէ ի՞նչ այս այս գաղափարը կրնայ հաշոտուիլ հընդեւոսպական նախաղեղովի հաւատոյն հետ ի՞նչ և իցէ, նոյն տեսութիւննքը՝ որոնց կարևորութիւնը լիմիին կը զգանք, մեզ կը պատկանի անշաւու արդարացնելու ջանալ : Այս մեր յօդատածին քննիչը պատշաճ դատած է առանց ո՛ւ և է պատճառաբանութեան, առանց մեր ի հարիէ համառօտի նշանակած փաստերուն ակնարկութիւն ևս ընկեռ, զարմանալիք ինքնահաճութեամբ մը կանխաւ զինու տալ մեր կարծեաց զէմ : Այդ ևս մեզ չէ փոյթ : կը ցաւինք միայն որ իբրև սալոր եղած քննադատութեան եղանակը կը հարկադրէ զմեզ ըսելու թէ՝ կատակարանութիւնը և յաւակնու բացասութիւնը փաստի տեղ չեն բըսներ, և թէ ճշմարիտ հմտութեան յարզը քննադատի գահաւորութեան՝ շըսենք հասարակ բաղաբանակարութեան, ձևերը պահեյով

8. ԱՐԵՔ



ԽՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

6 7 8 9 10 11 12 13 14 15

(շաբաթի յէջ 9)

ԵՐԻՇՔ ՈՒԽԵ՞Ր ՕՏԱՐ ԱՂԲԻՒՐ

Բ. Միւս երկու խնդիրներն, յունաց հրեշտակովնեան եւ աղուանից օգնութեան, մենք տալածութեցինք արդէն. ուստի հոս կը մնայ զ համառոտիւ անցնել:

Առանց առաջնայն մեջ՝ Նորիչ կը գնէր մի ուսպան, եւ ապս կը յաւելոյց՝ «յանդիման մեծի թագաւորին» (124). Փարագեցին ու ունի այդ խօսքը բառացի, «յանդիման մեծի թագաւորին թէոդորի» (217), եւ կը անձ երակ գետապան։ Այսու թնագառն հարկ է համարել կարծել թէ Ծղիչի մէջ ինաւ արտեր է գեսպանաց թիւն։ իսկ մէջ բեռած համանամեն խօսքն կը հետեւենէր, է կամ երկու պատմիչ մէկը միւսին աղուը է ծառայել, եւ կամ մի երրորդ յիշաւակարանից դորս են գրել երկու պատմիչն Յանդիման նոյն թուականութեան վրաց որովհետեւ, որը Նորիչ իր հակասութեամբ չէ կատար աղրիւր եղած իինել Ղազարյաց «Կարպարանեալ ճշգրտապատում» տեղիկութեան, ըրեմ կը մայ ընդունել թէ Նորիչի պատութեան ճեղինակն ի Փարագեցոյն կամ յայլ շատառակարանէ հանած է «Յանդիման եւ նոյն...» խօսքերը, «մասանալով որ այդ տուրքը հակասում են իր ձեռով աղաւազած որիքին, ան է մի հոգովզ գեսպանութեան եփելու թիւն»։

Դիմունք թէ Եղիշէի տեղեկոթիւնքն հակը ասակցն են, եւ յարմարուած անծանօթէ մի: Այս տեղ բնականապէս ընդ առաջ կ'ել- նեն մեզ այս հարցերն: Առաջին, եթէ ան- ժամանքն համարձակիր է ազատաշել իւր աղ- բիւրը զՊարար կամ և մի երրորդ յիշաստ- կարան ն, ինչո՞ւ այդ և երրորդը յանձն Ե- ղիշէի գործը չլինի, եւ անծանօթն անը մէջ խանգարած դեսպանաց թիւը, եւ Պազար նախ քան այդ խանգարումն օգտուած անոր- մէ: Երրորդը, եթէ Եղիշէի խմբագրիչն յան- դիման հենցեղու տեղեկոթիւնն առաջ ի Փար- պեցոյն կամ յայմէ, ի Վարդանանց այն- չափ Հենիք — «ուշ ժամանակի» — ուստի եւ անծանօթ ալդ մարդոն ի՞ն նպատակ կամ